

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՈՒՄԱՆԱՑ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ

Ի ԽՍՈՒՆ ԺՈՂՈՎՈՑ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

375

4-83

Կ. ՊՈԼԻՍ

ԿԵԴՐ. Ս. ԱՍՏՈՐԻՆԵԱՆ ՈՐԻԿՐ

1924

9851

Горбунов Сергей
младше сын Степана

ՕՐԻՆԱԿԱՆ ՑՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՏԱՌԻՔԻ ՄԱՍԻՆ

Նախակրթութիւնը պարտաւորիչ է 7 էն 16 տարեկան բոլոր տղայոց համար:

Նախակրթարանի Տարրական Առաջին դասարանը կ'ընդունուն 6 ը լրացուցած և 11 ը չթեւակոխած տղաք:

Նախակրթարանի միւս դասարաններուն համար կը պահուի տարիքի նոյն համեմատութիւնը: Այսպէս կ'ընդունուին.

ՏԱՐՐԱԿԱՆ Բ.	8 հն	մինչև	12	սարկաններ:
ՄԻՋԻՆ Ա.	9 —	—	13	—
ՄԻՋԻՆ Բ.	10 —	—	14	—
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա.	11 —	—	15	—
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ.	12 —	—	16	—

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԳԱՍԵՐՈՒ ՊԱՋԵՐԸ

ԻՐԱՔԱՆՉԻՐ ԴԱՍԱՐԱՆԻ ՄԷՋ

	Ն Ի Թ Ե Ր	ՏԱՐՐԱԿԱՆ		ՄԻՋԻՆ		ԲԱՐՁՐԱԿԱՆ	
		Ա.	Բ.	Ա.	Բ.	Ա.	Բ.
1	Կրօնք	1	1	1	1	1	1
2.	Թրքերէն	4	4	4	4	4	4
3.	Հայերէն Աշխարհաբար	4	4	4	4	3	3
4.	Հայերէն Գրարար . .	—	—	—	—	1	1
5.	Ֆրանսերէն	—	—	2	3	3	3
6	Գաղաքացիական Կրթ.	—	—	—	—	1	1
7	Բացատրեալ ընթերցմի.	3	3	2	2	1	—
8	Ընդհանր. Պատմութիւն	—	1	2	2	1	1
9	Թուրքիոյ Պատմութիւն	—	—	—	—	1	1
10.	Ընդհ. Աշխարհագրութիւն	[1] 2	1	1	1	—	—
11.	Թուրքիոյ Աշխարհագրութ.	—	—	—	—	1	1
12.	Ուսողութիւն	5	5	4	4	4	3
13.	Վճռկ. Գիտ. և Տմբկլթ.	—	—	—	—	—	2
14.	Բնական Գիտութիւններ	3	3	2	2	2	2
15.	Առողջապահութիւն . .	—	—	—	—	1	1
16	Բրոյկն. Ընթերցուածք	2	2	2	1	—	—
17.	Գծագրութիւն	1	1	1	1	1	1
18.	Զեռկն. Աշխատութ. [2]	3	3	3	3	[3] 3	[3] 3
20.	Երգ և Մարդանք	2	2	2	2	2	2
ԳՈՒՄԱՐ		30	30	30	30	30	30

Գ Ի Տ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ե Ն Ն Ե Ր

[1].— Առաջին վեցամեային, այդ պահերուն Հայերէն Աշխարհաբար կը դաստանդուի:

[2].— Աղբիւրները այս միջոցին Ձեռագործով ևս Կար ու Ձեռով կ'ըրադին. Տե՛ս Ծրագիրը:

[3].— Մի միայն աղբիւրը համար, այս պահերին մէյմէկ հասը կը յատկացուի Առնին Տնտեսութեան:

[4].— Եկեղեցական Երաժշտութիւնը կը կատարուի Ուրբաթ օրերը, եկեղեցւոյ մէջ, Դպրապետին առաջնորդութեամբ:

ՕՐԱԿԱՆ ՋԲԱՂՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

8 ¹⁵ — 8 ²⁵	Մաքրութեան քննութիւն և ներկայու-
8 ²⁵ — 8 ³⁰	Աղօթք (թեան ճշգրտւմ)
8 ³⁰ — 9 ¹⁵	Ա. ԴԱՍ
9 ¹⁵ — 9 ²⁰	Դադար
9 ²⁰ — 10 ⁵	Բ. ԴԱՍ
10 ⁵ — 10 ¹⁵	Դադար
10 ¹⁵ — 11	Գ. ԴԱՍ
11 — 11 ¹⁵	Դադար
11 ¹⁵ — 12	Դ. ԴԱՍ
12 — 12 ¹⁵	Շուքտական Մարզանք և Երգ
12 ¹⁵ — 13 ¹⁵	Ճաշ և Հանգիստ (Տե՛ս Դիտողութիւն II)
13 ¹⁵ — 14	Ե. ԴԱՍ
14 — 14 ¹⁵	Դադար
14 ¹⁵ — 15	Զ. ԴԱՍ
15 — 15 ³⁰	Զրօսանք (Տե՛ս Դիտողութիւն III)
15 ³⁰ — 16 ¹⁵	Սերտողութիւն (Տե՛ս Դիտողութիւն IV)

Կ Ի Ց Ա Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ

I.— Գծագրութեան Ձեռական Աշխատութեան, երգ ու Մարզանքի և Գրօնի դասերը միշտ ցորեկէն վերջի պահներուն տեղի պիտի ունենան:

II.— Յորեկուան Հանգիստի միջոցին քուռն խաղերը բացառականապէս արգիւրուած են:

III.— Դեռ օդերու, երբ տաք է համայն անկաւելի լըլայ, զրօսանքի այդ ժամանակամիջոցին մեկ մասը պիտի յատկացուի երգի:

IV.— Սերտողութիւնը պիտի աւարտի ժամը 16¹⁵ ին միջոցում ամենակարճ օրերուն, ըստ եղանակի, այդ Սերտողութիւնը պիտի տևի մինչև ժամը 17³⁰, պզտիկ դադարով մը ընդմիջուած:

1. ԿՐԹՆՔ

ՏԱՐԲԱՆԱՆ Ա. (Շաբաթական 1 պահ)

Արարչագործութիւն. Նոյ, Աբրահամ, Իսահակ, Յովսէփ.— Իսրայէլի Եգիպտոս մուտքը եւ ելքը.— Մովսէս եւ տասնաբանեայ պատուիրանքը.— Դաւիթ, Սողոմոն:

ՏԱՐԲԱՆԱՆ Բ. (Շաբաթական 1 պահ)

Արարչագործութիւն.— Կայէն, Աբէլ, Նոյ, Զրհեղեղ, Աբրահամի կոչումը. Իսահակ, Յակոբ, Յովսէփ. Իսրայէլի Եգիպտոս մուտքը եւ ելքը:

Մովսէս եւ տասնաբանեայ պատուիրանքը.— Յեսու եւ Աւետեաց երկրին գրաւումը.— Սամուէլ, Սաւուղ, Դաւիթ, Սողոմոն. Իսրայէլի երկու տէրութեանց բաժանումները. Աքաաք եւ Եղիա մարգարէ. Ովսէէ. Իսրայէլի Թագաւորութեան կործանումը.— Եզեկիա, Եսայի եւ այլ մարգարէներ:

Յուդայի Թագաւորութեան կործանումը:

ՄԻՋԻՆ Ա. (Շաբաթական 1 պահ)

Աւետում. Քրիստոսի ծնունդը, մկրտութիւնը, առաջին հրաշքը եւ գլխաւոր հրաշքներ. գլխաւոր առակներ (յեսուս քարոզը եղև.): Յիսուսի խաչելութիւնը, Յարութիւնը եւ Համբարձումը:

Առաքելոց բարոյութիւնները, մասնաւորապէս Պօղոսի գործերը:

ՄԻՋԻՆ Բ. (Շաբաթական 1 պահ)

Քրիստոնէութեան մուտքը Հայոց մէջ, Աբգարի եւ Տրդատի օրով. Գրիգոր Լուսաւորիչ, Մեծն Ներսէս, Մեծն Սահակ. Ս. Մեսրոպ եւ Հայ գիրերու գիւտը. Աստուածաշունչի թարգմանութիւնը Հայերէնի:

Հայ եկեղեցւոյ կազմակերպութիւնը (Ծիսեր. Տօներ. Ս. Պատարագ):

Պարսկական հալածանքներ եւ ինքնապաշտպանութեան ճիգերը:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շաբաթական 1 պահ)

Հին Հայոց Կրօնքը.— Հայ դիցաբանութիւնը.— Բնապաշտութիւն եւ բազմաստուածութիւն:

Երեք տիեզերական ժողովները.— Նշանաւոր կաթողիկոսները (Գիւս, Յովհան Մանդակունի, Բարգեկ):

Քաղկեդոնական առաջին վէճերը.— Ներսէս Գ. Շինող.— Յովհան Իմաստասէր.— Գրիգոր Վկայասէր. Ներսէս Շնորհալի:

Եկեղեցիներու միութեան փորձեր:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շաբաթական 1 պահ)

Քրիստոնէութեան գլխաւոր բաժանումները:

Կաթողիկոսութեան աթոռները Էջմիածին, Սիս եւ Աղթամար: Երեւելի կաթողիկոսներ (Մովսէս, Փիլիպոս, Սիւրեն, Եփրեմ, Ներսիս Աշտարակեցի, Գեորգ Դ.):

Աթոռ Երուսաղէմի.— Աթոռ Կ. Պոլսոյ:

Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն, հաւատալիքները.— Եկեղեցւոյ խորհուրդները:

2. ԹՐՔԵՐԷՆ

ՏԱՐՐԱԿԱՆ Ա. (Շաբաթական 4 պահ)

Կրթական Տնօրէնութեան ծրագրին համաձայն:

ՏԱՐՐԱԿԱՆ Բ. (Շաբաթական 4 պահ)

Կրթական Տնօրէնութեան ծրագրին համաձայն:

ՄԻՋԻՆ Ա. (Շաբաթական 4 պահ)

Կրթական Տնօրէնութեան ծրագրին համաձայն:

ՄԻՋԻՆ Բ. (Շաբաթական 4 պահ)

Կրթական Տնօրէնութեան ծրագրին համաձայն:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շաբաթական 4 պահ)

Կրթական Տնօրէնութեան ծրագրին համաձայն:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շաբաթական 4 պահ)

Կրթական Տնօրէնութեան ծրագրին համաձայն:

Յ. ՀԱՅԵՐԷՆ

ՏԱՐԲԱԿԱՆ Ա. (Շաքարական 4 պահ)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ — Տղոց կարդացնել իրենց դասագրքէն անջատ բառեր, կարճ խօսքեր եւ փոքրիկ հատուածներ, առողջանութեան վարժեցնելու եղանակաւ: Որոշ կերպով անոնց բացատրել եւ բացատրել տալ բառերու իմաստը եւ հասկցնել խօսքին կամ հատուածին ընդհանուր նշանակութիւնը: Ընթերցուածին գլխաւոր առանցքը կազմող իրին կամ գործին վրայ աշակերտը խօսեցնել իր անձնական ծանօթութեանց վրայ՝ հոգ տանելով ուղղախօսութեան:

Պատկերներէ թելադրուած խօսակցութիւններ:

ԳԻՐ — Խոշոր եւ պարզ գրերով անջատ բառեր ճիշտ ընդօրինակելու վարժութիւններ:

ՏԱՐԲԱԿԱՆ Բ. (Շաքարական 4 պահ)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ — Հատուածներու սահուն կերպով ընթերցման վարժութիւններ:— Տղան պէտք է որ իր կարդացած հատուածին գլխաւոր գաղափարը իր լեզուով ամփոփ կերպով յայտնէ եւ ի հարկին մանրամասնութիւններ տայ այդ հատուածին վրայ: Հատուածին մէջ գտնուած անծանօթ բառերուն իմաստը ճշգրտորէն բացատրել տղոց եւ այդ բառերով նախադասութիւններ կազմել տալ անոնց:

Գոց սորվեցնել եւ արտասանել տալ փոքրիկ ոտանաւորներ եւ հատուածներ:

ՈՒՂՆԱԳՐՈՒԹԻՒՆ — Անջատ բառերով եւ պզտիկ նախադասութիւններով ուղղագրական փորձեր ընել:

ԳԻՐ — Ընթերցանութեան հատուածներէն պարբերութիւններ ընդօրինակել տալ, տղաքը վարժեցնելու համար ուղիղ եւ ընթեռնելի կերպով գրելու:

Կէտադրութեան նշաններու կարեւորութիւնը ու գլխագիրներու վարժութիւն:

ՄԻՋԻՆ Ա. (Շաքարական 4 պահ)

ԲԱՅԱՏՐԵԱԼ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ — Գտնել տալ կարդացուած հատուածին գլխաւոր եւ երկրորդական գաղափարները եւ բառերուն ճշգրիտ իմաստը: Ապա՝ ընթերցուածին իմաստը ճշտիւ արտայայտելու, խօսելու շեշտով կարդալ տալու վարժեցնել:

Շատ կարճ ոտանաւոր եւ յանգաւոր առակներու իմաստը ամփոփ եւ արձակ արտայայտել տալէ յետոյ բնական շեշտով արտասանել տալու յաջողիլ:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Համառօտ եւ ամփոփ կերպով սորվեցնել մասունք բանին:

Հորովումները (կանոնաւոր եւ անկանոն):

Խոնարհումները (կանոնաւոր թայն):

Նախապէս ընդօրինակել տրուած ընթերցուածէն դասին մէջ կարճ խօսքեր ուղղագրել տալ:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ — Դասին մէջ ներկայ առարկայի մը կամ կատարուելու վրայ եղող գործի մը վրայ եղած բերանացի դիտողութիւնները հաւաքելէ, դասաւորելէ յետոյ՝ գրի առնել տալ գրատախտակին վրայ եւ ընդօրինակել տալ տետրակներու մէջ:

ԳԻՐ — Հասարակ եւ գլխագիր տառերով վարժութիւններ: Գեղագրութեան փորձեր:

ՄԻՋԻՆ Բ. (Շաքարական 4 պահ)

ԲԱՅԱՏՐԵԱԼ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ — Միջին Ա. ի ծրագիրը՝ քիչ մը աւելի ընդլայնուած:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Մասունք բանի՝ աւելի ընդլայնուած կերպով: Կանոնաւոր եւ անկանոն հոլովումներ եւ խոնարհումներ:

Հոմանիշ, հականիշ եւ նմանաձայն բառեր:

Ածանցում, բարդութիւն եւ բառերու ընտանիք:

Կէտադրութիւն եւ իր կանոնները:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ — Դիտողաբար եւ առանձին շարադրել տալ անձնական փորձառութիւնէ քաղուած իրողութիւններ եւ տպաւորութիւններ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շաքարական 3 պահ)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ — Յստակ, կշռուած առոգանութեամբ բարձրաձայն կարգալու եւ արտասանելու վարժութիւններ արձակ կամ ոտանաւոր գրուածներու վրայ:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Բառագիտութիւն եւ համաձայնութիւն: Բառակազմութիւն. ածանցեալ, բարդ եւ բաղադրեալ բառեր:

Աշակերտին տալ յաճախակի հրահանգներ բարդութեանց եւ ածանցմանց վրայ:

Բերանացի քերականական վերլուծումներ:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ — Տղոց վարժութիւն ընել տալ, յստակ եւ անսխալ լեզուով մը շարադրելու:

Նիւթերը պիտի առնուին միշտ աշակերտաց անձնապէս ծանօթ իրերու կամ իրողութիւններու մէջէն:

Ընտանեկան նամակագրութեան հիմնական սկզբունքներու վրայ վարժութիւններ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շաքարական 3 պահ)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ — Ընդլայնել Բարձրագոյն Ա. ի ծրագիրը եւ աւելցնել հատուածներու հեղինակներուն մասին կենսագրական ծանօթութիւններ:

Հոգ տանիլ որ աշակերտները դիտեն թէ ծայնի ինչպիսի՞ ելեւէջներով կ'արտայայտուին զանազան զգացումներն ու դատողութիւնները:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Ամբողջական վերաբաղ բառագիտութեան եւ համաձայնութեան:

Քերականական եւ առաւելապէս տրամաբանական վերլուծում:

Տառադարձութեան կանոններ:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ — Ուղիղ գրելը, ճշգրիտ բառերով, կանոնաւոր եւ յստակ նախադասութիւններով արտայայտուել բերանացի եւ գրաւոր կերպով:

Նիւթերը պէտք է առնուին ուսման ճիւղերէն:

4. ԳՐԱԲԱՐ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շաքարական 1 պահ)

Պարզ գրաբար հատուածները աշխարհաբարի վերածել տալ եւ անոնց վրայէն ծանօթացնել գրաբարի յատուկ ձեւերը (անուններու եւ դերանուններու հոլովումը, բայերու խոնարհումը եւլն.):

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շաքարական 1 պահ)

Գրաբար հատուածներու աշխարհաբար թարգմանութիւնը: Փոքրիկ աշխարհաբար նախադասութիւնները գրաբարի վերածելու վարժութիւններ:

5. ՓՐԱՆՍԵՐԷՆ

ՄԻՋԻՆ Ա. (Շաքարական 2 պահ)

Դասարանի կեանքին շատ սովորական խօսքերը հասկնալ եւ ճշդիւ ու սահուն կերպով արտաբերելու ջանալ: Երբ բերանացի ուսուցուած խօսքերուն պաշարը քանի մը հարիւրի հասնի, սորվեցնել նաեւ ուղիղ գրել այդ խօսքերը՝ նոր նախադասութիւններ ուսուցանելու գործը շարունակելով հանդերձ:

ՄԻՋԻՆ Բ. (Շաքարական 3 պահ)

Նախորդ տարուան գործը շարունակելով, խօսքի պաշարը շտուգնել շարաթուան երկու ժամերուն մէջ: Իսկ երրորդ ժամը յատկացնել ընթերցարանի մը խօսքերը խօսելու եւ ապա գրելու:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շաքարական 3 պահ)

Ընթերցարանի մը խօսքերը խօսիլ եւ ընդօրինակել: Ընթերցուածը մշակել հարցումներով: Բառերու ճիշտ սահմանը միտք պահել տալ:

Ներկայ առարկաներու վրայ դասարանին մէջ եղած դիտողութիւնները հաւաքել, կոկել, եւ արդիւնքը գրատախտակին վրայ գրելէ վերջ՝ ընդօրինակել տալ շարադրութեան տետրակին մէջ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շաքարական 3 պահ)

Նախորդ տարուան ընթացքը շարունակել: Բառերու ընտանիքներ (ածանցում, բարդում) տալ: Ծանօթ խօսքերու վրայէն սորվեցնել մասունք բանին: Ծանօթ հատուածներու վրայէն համաձայնութեան պարզ կանոնները հանել եւ հանել տալ:

Դասարանին մէջ ըստ առաջնոյն շարադրութիւն գրել տալ, հետզհետէ նուազ միջամտելով:

6. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

և

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շաքարական 1 պահ)

ԽԻՂՃ. — Խղճի հանդարտութիւն. խղճի խայթ:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Սահմանը, բաժանումը. պարտականութիւններ անձին, տան, քաղաքացիութեան, հայրենիքին, մարդկութեան եւ Աստուծոյ հանդէպ:

ԱՆՁԻՆ ՀԱՆԴԻՊ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — Առողջապահութիւն. կամքը կրթել. ուսմունք սորվիլ. յարատեւութիւն եւ հաստատամտութիւն. քաջութիւն. յարգանք անձին. համեստութիւն եւ խոնարհութիւն. լրջութիւն. ջանասիրութիւն. կարգապահութիւն. խընայողութիւն. առատածնունդութիւն. պարտքէ ըզգուշանալ. ձեռներեցութեան ոգի. ամէն ոք իր պատկանած համայնքին եւ կառավարութեան պէտք չէ բեռ ըլլայ եւ երկրագործութեամբ, վաճառականութիւնով եւ իր արհեստով ջանալու է ապահովել իր ապրուստը:

ՏԱՆ ՀԱՆԴԻՊ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — Տղոց պարտականութիւնները իրենց ծնողքին հանդէպ: Ծնողաց պարտականութիւնները զաւակաց հանդէպ:

Ընտանիքի մը իւրաքանչիւր անդամին իրարու հանդէպ ունեցած պարտականութիւնը:

Ամուսնութիւն. բնոյթը եւ կարեւորութիւնը:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — Օրէնքին հնազանդիւ: Զինուորութիւն. կարգապահութիւն. յարգանք դրօշակին. անձուիրութիւն հայրենիքին հանդէպ. ընտրութեան իրաւունքը լաւ գործածել:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ.— Մարդկային կեանքը զերծ է ամէն բռնաբարումէ.— Պատիւը եւ արժանապատուութիւնը զերծ են բռնաբարումէ:

Նախատինք. ծաղրանք. բամբասանք...

Յարգանք ուրիշին կրօնքին եւ հաւատալիքներուն.— Զբոնանալ ուրիշին ստացուածքին. յարգել խոստումը. գութ. փափկութիւն մարդոց հանդէպ:

Փափկութեամբ վարուիլ կենդանեաց հանդէպ:

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ.— Կրօնական պարտականութիւններուն կարեւորութիւնը:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շարաբական 1 պահ)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.— Կառավարութեան մը գոյութեան պէտքը.— Կառավարութեան պարտականութիւնները: Անդորրութիւնը եւ արդարութիւնը ապահովել: Երկիրը պահպանել արտաքին թշնամիներու դէմ:

ԶԱՆԱԶԱՆ ԶԵՒԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ.— Բացարձակ միապետութիւն. սահմանադրական կառավարութիւն. հանրապետական կառավարութիւն.— Բացարձակ միապետութեան անպատեհութիւնները: Սահմանադրութեան անպատեհութիւններն ու օգուտները.— Հանրապետութեան օգուտները:

Համառօտ գաղափար մը տալ սահմանադրութեան եւ հանրապետութեան համար մղուած պայքարներուն մասին:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ.— Սննդական ազատութիւն. խօսքի ազատութիւն: Համախմբուելու ազատութիւն.— Ընկերակցութեան ազատութիւն:

Խղճի եւ Կրօնքի ազատութիւն:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ.— Իրաւունքներ. հայրենասիրութիւն. յարգանք դրօշակին. յարգանք կրօնական եւ ազգային հաստատութեանց. նախահարց, ազգին երեւելիներուն եւ նախնեաց գործերուն յարգանք.— Զօրանոցի, դպրոցի նման ազգ. եւ պետ. հաստատութեանց յարգանք: Զինուորութիւն. տուրքեր:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ.— Գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւն.— Դատական իշխանութիւն.— Աստնց իւրաքանչիւրին վրայ համառօտ տեղեկութիւն:

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ.— Ընտրութիւն: Ազգային Մեծ Ժողով.— Օրէնքները ինչպէ՞ս կը շինուին:

Կառավարութեան վարչական կազմակերպութիւնը:— Դիւղ. գիւղախումբ. գաւառ. կուսակալութիւն.— Կեդրոնի պաշտօնատուներ. իւրաքանչիւր պաշտօնատան վրայ համառօտ գաղափար:

ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ.— Թաղապետութիւններ: Պարտականութիւնը.— Ժողովուրդին պարտականութիւնը թաղապետութեանց հանդէպ.— Թաղապետական ընտրութիւններ:

ԴԱՏԱՐԱՆՆԵՐ.— Հաշտարար դատարաններ: Դանգատ. հարցաքննութիւն. նախնական, վերաքննիչ, վճռաբեկ ատեաններ եւ օրինական դատարաններ.— Դատարաններէ եկած կոչնագիրներուն պատասխանելու ստիպողութիւն:

Ոստիկաններ. ոստիկան զինուորներ. գիւղի պահապաններ. գիւղապետներ. մուխթարներ. ծերերու Ժողովներ. ուսուցիչներ. իրենց պարտականութիւնը եւ կարեւորութիւնը:

7. ԲԱՅԱՏՐԵԱԼ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՔ

ՏԱՐԲԱԿԱՆ Ա. (Շաբաթական 3 պահ)

ՏԱՐԲԱԿԱՆ Բ. (Շաբաթական 3 պահ)

ՄԻՋԻՆ Ա. (Շաբաթական 2 պահ)

ՄԻՋԻՆ Բ. (Շաբաթական 2 պահ)

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շաբաթական 1 պահ)

Կրթական Տնօրէնութեան վաւերացմանը ենթարկուած գրքերէն, զանազան դասարաններու մէջ, տղոց տարիքին եւ հասկացողութեանը համեմատ կը տորներու ընթերցանութիւնը պիտի կատարուի եւ պէտք եղած բացատրութիւնները եւ ընդլայնումները պիտի տրուին:

8. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՐԲԱԿԱՆ Բ. (Շաբաթական 3 պահ)

ՆԱԽԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ. — Մարդոց նախնական կեանքի (սնունդ, հագուստ, բնակարան) եւ հաւաքական կեանքի մասին ծանօթութիւններ՝ ընթերցանութեան ձեւով:

Ս. Գրքէն եւ նախնեաց աւանդութիւններէն առնուած օրինակներով պիտի բացատրուի մարդոց նահապետական կեանքը:

ՄԻՋԻՆ Ա. (Շաբաթական 2 պահ)

ՀԻՆ ԴԱՐ — Մարդկային ցեղերը եւ անոնց քաղաքակրթութեան ազդակները:

Եգիպտոս եւ իր քաղաքակրթութիւնը:

Քաղղէացիներ, Ասորեստանցիներ. անոնց քաղաքակրթութիւնները:

Փիւնիկեցիներ, Եփրայեցիներ. իրենց քաղաքակրթութիւնները:

Հիթիթներ եւ իրենց քաղաքակրթութիւնը:

Արիական ցեղերը եւ անոնց գաղթականութիւնները: Մարերը, Պարսիկները. անոնց քաղաքակրթութիւնները:

Հին Յունաստան. — Աշխարհագրական դիրքը. Աթէնք, Սպարդա եւ Թէփէ:

Մեծն Աղէքսանդր եւ իր կայսրութիւնը:

ՄԻՋԻՆ Բ. (Շաբաթական 2 պահ)

Հռովմի հիմնադրութիւնը. ժողովուրդին դասակարգները:

Հռովմի աշխարհակալութիւնը Իտալիոյ մէջ եւ Իտալիայէն դուրս:

Հռովմայեցւոց պատերազմները Միհրդատի եւ Տիգրանի հետ. — Կեսար, Օգոստոս եւ իր յաջորդները:

Արեւելեան եւ արեւմտեան կայսրութիւններ:

Հայերը արեւելեան կայսրերու եւ սասանեան Պարսիկներու օրով:

ՄԻՋԻՆ ԴԱՐ — Բարբարոսներու արշաւանքները եւ անոնցմէ կազմուած պետութիւնները:

Մեծն Կարոլոս:

Պապութիւն:

Մուհամմէտ եւ իր քաղաքական ու կրօնական դերը. — Մահմետականութեան տարածումը. — Արաբական կայսրութիւնն ու քաղաքակրթութիւնը:

Հայերը արաբական տիրապետութեան տակ:

Սելճուզներու եւ Մոնկոլներու արշաւանքները:

Հայերու գաղթը Տաւրոսի շրջակաները:

Խաչակրութիւններ. — Հայերուն խաչակիրներէն կրած փնասները:

Աւատականութիւն:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շաբաթական 1 պահ)

ՆՈՐ ԴԱՐ — Վերածնունդ:

Ամերիկայի գիւտը:

Բողոքականութեան ծագումը:

Պետութիւններու կազմութիւնը. — Անգլիա, Ֆրանսա, Սպանիա, Գերմանիա, Հոլանտա:

Օսմանեան Թուրքերը, անոնց աշխարհակալութիւնները. — Կոիւներ Պարսիկներուն հետ. — Հայերու կեանքը այդ շրջանին:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շաբաթական 1 պահ)

Բացարձակ միապետութեան շրջան:

Անգլիական յեղափոխութիւնը Կարոլոս Ա.ի օրով. — Բրումվէ:

Ամերիկայի յեղափոխութիւնը եւ գերութեան ջրնջումը:

Մեծն Պետրոս եւ իր գործերը:

Անգլիական յեղափոխութիւնը Կիյովի օրով (փառաւոր յեղափոխութիւն):

Լուի 14երորդի իշխանութիւնը:

ՓԱՄԱՆԱԿԱԿՑ ԴԱՐ — Ֆրանսական յեղափոխութիւնը:

Նաբօլէոնի կայսրութիւնն ու անկումը:

Վիէնայի խորհրդաժողովը:

Ֆրանսայի մէջ Գ. Հանրապետութեան հաստատումը:

Անգլիոյ գաղթային ծաւալումը. — Եւրոպական կարեւոր գաղթավայրեր:

Իտալիոյ քաղաքական միութիւնը. — Բավուր, Մաժինի եւ Կարիպալտի:

Ֆրանք-Գերմանական պատերազմը եւ Գերմանիոյ քաղաքական միութիւնը. — Պիզմարք:

Ռուսո-Թուրք պատերազմները:

Պալքանեան պետութիւններու կազմութիւնը:

Ռուս եւ ճաքոն, Թուրք եւ հելլէն, Տրիպոլսոյ եւ Պալքանեան պատերազմները:

Հայերը Պարսկաստանի մէջ, Օսմանեան գերիշխանութեան տակ, Ռուսաստանի, Լեհաստանի, Ռումանիոյ, Պալքանեան երկիրներու, Ամերիկայի եւ այլ գաղութներու մէջ:

9. ԹՈՒՐԻՔ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շարաքական 1 պահ)

Կրթական Տնօրէնութեան ծրագրին համաձայն:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շարաքական 1 պահ)

Կրթական Տնօրէնութեան ծրագրին համաձայն:

10. ԸՆԴՀԱՆՍՐՈՒՄ ԶԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԲԱԿԱՆ Ա. (Շարաքական 2 պահ)

Ընթերցանութեան ձեւով տղուն ծանօթացնել իր բնական միջավայրին զանազան մասերը եւ սորվեցնել աշխարհագրական բացատրութիւնները:

Երկրին ձեւն ու մեծութիւնը. օրական շարժումը. գօտիներն ու անոնց ազդեցութիւնը մարդոց կեանքին վրայ:

Ցամաքին հինգ բաժանումներն ու ովկիանոսները:

ՏԱՐԲԱԿԱՆ Բ. (Շարաքական 1 պահ)

Մարդոց գլխաւոր պէտքերը. ինչպէս սկսաւ առեւտուրը. — ձամբաները. — Մարդոց եօթը զբաղումները (եղրագործութիւն, անասնաբուծութիւն, փոխադրութիւն, վաճառականութիւն, ձկնորսութիւն, հանքագործութիւն եւ աստղագործութիւն):

Քաղաք եւ գիւղ. — Կառավարութիւն:

Հովեր, անձրեւներ:

Երկրին ձեւն ու մեծութիւնը. — Օրական եւ տարեկան շարժումները:

Երկայնութեան եւ լայնութեան գիծեր եւ աստիճաններ:

Գօտիներ եւ անոնց ազդեցութիւնը մարդոց կեանքին վրայ:

Երկրին հինգ գլխաւոր բաժանումները:

Ասիոյ մասին ընդհանուր ծանօթութիւններ:

Մեր հայրենիքը՝ Թուրքիա. — Մեր դրացիները (Միջագետք, Սուրիա, Կովկաս):

Ընդհանուր ծանօթութիւններ Եւրոպայի մասին:

Եւրոպական Թուրքիա եւ իր դրացիները (Պալեստինա պետութիւններ):

Ընդհանուր ծանօթութիւններ Աֆրիկէի, Ովկիանիոյ եւ Ամերիկաներու վրայ:

ՄԻՋԻՆ Ա. (Շարաքական 1 պահ)

Եւրոպայի վրայ ընդհանուր ծանօթութիւններ:

Մեծ ու փոքր պետութիւններ. — Անոնց բնական ու բաղադրական նկարագրերը. — Իւրաքանչիւրին եօթը զբաղումներուն մասին ծանօթութիւններ:

ՄԻՋԻՆ Բ. (Շաքարական 1 պահ)

Ասիոյ, Ափրիկէի, Ովկիանիոյ եւ Ամերիկաներու մասին ընդհանուր ծանօթութիւններ.— Ասոնց գլխաւոր պետութիւնները եւ իւրաքանչիւրին քաղաքակրթութեան եւ եօթը զբաղումներուն վրայ ծանօթութիւններ:

11. ԹՈՒՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շաքարական 1 պահ)

Ըստ Կրթական Տնօրէնութեան ծրագրին:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շաքարական 1 պահ)

Ըստ Կրթական Տնօրէնութեան ծրագրին:

12. ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ

ՏԱՐԲԱԿԱՆ Ա. (Շաքարական 5 պահ)

1 էն մինչեւ 100 թիւերը:

Նախապէս 1 — 10, վերջը 1 — 20 եւ յաջորդաբար մինչեւ 1 — 100 թիւերու վրայ մտաւոր վարժութիւններ ու խնդիրներ:

Կոտորակի գաղափարը.— Կէս, մէկ երրորդ, մէկ չորրորդ, մէկ հինգերորդ, մէկ ութերորդ, մէկ տասներորդ.— Մէթր, տէսիմէթր եւ սանդիմէթր:

Մէթրի գործածութեամբ առարկաներու տարածութիւնները չափել:

Աչքի-չափի վարժութիւններ.

ա.— Դրատախտակին վրայ ուսուցչին կողմէ գծուած ուղիղի մը երկայնութիւնը սանդիմէթրով գնահատել տալ, ու վերջը, չափելով ճշդել.— Ուղուած երկայնութեամբ ուղիղ մը գծել տալ, ու վերջը, չափելով ճշդել:

բ.— Առարկայի մը տարածութիւնները գնահատել տալ, ու վերջը, չափելով ճշդել:

գ.— Տղոց հասակները տէսիմէթրով գնահատել տալ, ու վերջը, չափելով ճշդել:

դ.— Պարտէզին մէջ երկու կէտերու հեռաւորութիւնը մէթրով գնահատել տալ, ու վերջը, չափելով ճշդել.— Երկու տղաք ուղուած հեռաւորութեան մը վրայ կեցնել տալ, ու վերջը, չափելով ճշդել. և ըն.

Կարգի գաղափար.— Դասական թիւեր:

Դրաւոր հաշիւ.— Դրաւոր խնդիրներ:

Երկրաչափական մարմիններ (խորանարդ, ուղիղ պրիսմակներ, գրան, բուրգ, կոն, գունդ):

ՏԱՐԲԱԿԱՆ Բ. (Շաքարական 5 պահ)

ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ — 1 էն 1000 թիւերը.— Թիւ մը գրել ու կարդալ:

Մտաւոր հաշիւներ ու խնդիրներ:

Խառն թիւեր.— Ժամանակ, թրքական դրամներ:

Չորս գործողութիւններ.— Դրաւոր հաշիւ եւ խնդիրներ:

Կոտորակի գաղափարին ընդլայնումը.— Տասնորդական կոտորակներ՝ մինչեւ հազարորդ. ստորակէտին դերը:

Մէթր, Կրամ, Լիդր.— Ասոնց մինչեւ 1000 ստորապատիկներն ու բազմապատիկները:

Ամբողջական թիւերու չորս գործողութեանց օ-

րէնքներէն օգտուելով՝ տասնորդական թիւերու չորս գործողութիւնները կատարել, պարզ ձեւերու մէջ:

Էնտագէ, արշըն, տիրհէմ, օգգա. — Մէթրական դրութեամբ ատոնց արժէքները:

I. — Աչքի-չափի վարժութիւններ. — Նախորդ տարւան վարժութիւններուն ընդհանուր:

II. — Ձեռքի-չափի վարժութիւններ. — Ուեհ աւարկայի մը ծանրութիւնը ձեռքով գնահատել, ու վերջը, սխալը ուղղել՝ կշիռի դիմելով:

Երկու աւարկաներու ծանրութիւնները ձեռքով քաղդատել, ու վերջը, կշռելով ճշդել. եւ ըն.:

ԵՐԿՐԱՋԱՓՈՒԹԻՒՆ — Երկրաչափական մարմիններու ուսումնասիրութեան հետեւցնել ուղիղի, կէտի, անկիւնի, մակերեսի գաղափարները. — Մակարդակ:

Երկու ուղիղներու դիրքը իրարու նկատմամբ:

Անկիւններու տեսակները. — Շրջանակ:

Եռանկիւնի տեսակները. — Քառանկիւններ:

Քանակի, ուղղանկիւնի եւ կարկինի գործածութեամբ երկրաչափական պատկերներ գծել:

ՄԻՋԻՆ Ա. (Շարքական 4 պահ)

ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ — Ամբողջական թիւերու թուարկութիւնը. — Նախապէս մինչեւ 1000, ու վերջն ալ, հազարէն մեծ թիւերը:

Կրկնութիւն ամբողջական թիւերու 4 գործողութեանց:

Մտաւոր հաշիւներ եւ խնդիրներ:

Գրաւոր հաշիւներ եւ խնդիրներ:

Ամբողջական թիւերուն անբաւականութիւնը. — Տասնորդական կոտորակ:

Մէթրական դրութիւն. — Երկայնութեան, պարունակութեան եւ ծանրութեան չափեր: Վերածումի վարժութիւններ:

Տասնորդական թիւերուն չորս գործողութիւնները. — Երկու թիւերու մերձաւոր քանորդը:

Մտաւոր հաշիւներ եւ խնդիրներ:

Գրաւոր հաշիւներ եւ խնդիրներ:

ԵՐԿՐԱՋԱՓՈՒԹԻՒՆ — Շրջանակ. կարկին. — Անկիւններ: Ուղղանկիւնի քանակ:

Կեդրոնադիր անկիւններու չափը՝ իրենց կողմերուն մէջ մնացած աղեղով. — Անկիւնաչափ:

Ձուգահեռականներ. ուղղահայեացներ. խոտորներ:

Կարկինի գործածութեամբ՝ տրուած անկեան մը հաւասար անկիւն մը շինել, անկեան մը կիսողը քաշել, ուղղահայեաց տանիլ եւ ըն.:

Մակարդակ պատկերներ. — Գծագիրական վարժութիւններ:

ՄԻՋԻՆ Բ. (Շարքական 4 պահ)

ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ — Տասնորդական թիւերու 4 գործողութեանց վրայ կրկնութեան խնդիրներ:

Մտաւոր հաշիւներ:

Հասարակ կոտորակ. — Յատկութիւնները: Կոտորակներու բաղդատութիւնները:

Հասարակ կոտորակները տասնորդականի վերածել:

Հասարակ կոտորակներուն չորս գործողութիւնները: Խնդիրներ:

Խառն թիւեր.— Թրքական չափեր: Շրջանակին բաժանումը. անկիւնաչափ: Ժամանակ:

Երկրաչափական մարմիններու մակերեսներուն մակարդակի մը վրայ տարածումը:

Մէթրական դրութիւն.— Մակերեսի եւ ծաւալի չափեր:

Պատկերներու մակերեսներն ու մարմիններու ծաւալները.— Երկրաչափական մարմիններու մակերեսներն ու ծաւալները հաշուել:

Միջինի խնդիրներ:

Պարզ երեքի կանոնը:

Հարիւրին այսինչափի խնդիրներ: Շահ եւ վրնաս.— Արժէզին եւ վաճառումի գին.— Զեղչ, ապահովագրութիւն, մաքս, յանձնառողչէք, միջնորդչէք, տոկոս:

ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ — Երկրաչափական գծագրութիւն:

Հաստ թուղթով երկրաչափական մարմիններ շինել:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շարաքական 4 պահ)

Տասնորդական թիւերուն թուարկութիւնը եւ չորս գործողութիւնները:

Մտաւոր հաշիւներ:

Խնդիրներ.— Խնդիրներու ընդհանրացումը:

Դրերու գործածութեամբ խնդիրներ լուծել. գուգորդութիւն.— Խնդիրներու քննութիւնը:

Թիւերու յատկութիւնները՝ համառօտակի:

Հասարակ կոտորակ.— Չորս գործողութիւնները: Բազմաթիւ խնդիրներ:

Հասարակ կոտորակները տասնորդականի վերածել եւ փոխադարձաբար:

Քանակութիւններու չափը:

Մէթրական դրութիւն:

Թրքական չափեր.— Անգլիական չափեր:

Խառն թիւեր.— Չորս գործողութիւնները:

Համեմատական քանակութիւններ:

Պարզ եւ բաղադրեալ երեքի կանոն.— Հարիւրին այսինչափի խնդիրներ:

Տոկոս՝ պարզ եւ բաղադրեալ:

Զեղչ՝ առեւտրական եւ արմատական:

Հասարակաց եւ Միջին վճարօր:

Համեմատական բաշխում:

Ընկերութեան կանոն:

Խառնուրդ եւ մետաղներու բաղադրութիւն:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շարաքական 3 պահ)

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ — Մտաւոր հաշիւներ:

Թուրքիոյ եւ շրջակայ երկիրներու չափերուն եւ դրամներուն վրայ կրկնութեան խնդիրներ (Վասնաւորաբար ոյժ տալ անգլիական չափերուն եւ դրամներուն):

Հարիւրին այսինչափի, արժէզինի, տոկոսի, գեղչի, միջին վճարօրի, համեմատական բաշխման եւ խառնուրդի խնդիրներու կրկնութիւն:

Հաշուեցոյց:

Տոկոսաւոր ընթացիկ հաշիւներ:

Քառակուսի արմատ:

ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ — Ընդհանրութիւններ:

Մակարդակ պատկերներ:

Նմանութիւն.— Նման պատկերներու կերարկութիւններ: Յատակագիծ:

Երկրաչափական գործիքներու գործածութիւնը.— Երկրաչափական գծագրութիւն:

Անդաշափական ծանօթութիւններ:

Երկրաչափական մարմիններ.— Երկրագունդ:

13. ՎԱՃԱՌԱԿՆԿՆ ԳԻՏԵԼԻՔ

և

ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շարաքական 2 պահ)

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ — Թուրքիոյ եւ զանազան երկիրներու չափերուն եւ դրամներուն վրայ գործողութիւններու կրկնութիւն՝ հրապարակէն առնուած խնդիրներով:

Վաճառականութիւն. զանազան տեսակները.— Ընկերութիւններ:

Վաճառքներ.— Կշիռը, գինը, փոխադրութիւնը: Մաքսատուրք:

Առեւտրական թղթեր.— Փոխանակագիր. հրամանի մուրհակ. չէք. քնակավայրի մուրհակ: Օրինական տրամադրութիւններ:

Զեղչ. ընթացիկ հաշիւ. տոկոս:

Վաճառականական գործառնութիւններ:

Առեւտրական գործառնութիւններու կարգադրութիւնը:

Սնանկութիւն:

ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ — Պարտաւորիչ տետրակներ (Օրհաշիւ, Նամակներու ընթորիմակութեան տետր եւ Հաշուեկշիռի տետր):

Օժանդակ տետրակներ (Մքերատետր, Սնտակի տետր, Գանձի եւ Վճարելի տոմսակներու տետր, Դրամետ):

Կրկնատոմար. Զեռատետր. Օրհաշիւ. Մայր հաշիւ: Վաճառականական զանազան գործառնութիւնները տոմար անցնել:

Հաշիւներու ճշդում.— Հաշուեկշիռ:

Հաշիւները վերաբանալ:

Առտնին ելմտացոյց եւ տոմարակալութիւն:

14. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՐԲԱԿԱՆ Ա. (Շարաքական 3 պահ)

Ընտանեկան խօսակցութեան ձեւին տակ աշակերտներուն տալ գործնական ծանօթութիւններ օրերու, ամիսներու, եղանակներու մասին:

Կենդանիներ.— Տղուն շատ ծանօթ ընտանի կենդանիներու վրայ խօսիլ (շուն, կատու, կոյ, եղն):

Բոյսեր.— Կարելոր պտղատու ծառերը եւ շատ ծանօթ ծաղիկները ճանչցնել՝ ըստ եղանակի:

Հանքեր.— Շինութեան մէջ գործածուած քարերու մետաղներ (երկաք, կապար, զինկ եղն):

Մարդկային մարմին.— Մարմնոյն զանազան մասերուն վրայ նախնական ծանօթութիւններ եւ առողջապահական պարզ խրատներ:

ՅԱՐԱՐԱԿԱՆ Բ. (Շարաքական 3 պահ)

Աշակերտներուն ծանօթացնել ամենօրեայ գործածական առարկաները:

Տղուն ծանօթ կենդանիներու վրայ խօսիլ՝ բաժնելով զանոնք ընտանի, վայրենի, օգտակար եւ վնասակար դասերու:

Կարգ մը կենդանիներէ մեր քաղած օգուտները (կար, բուրդ, մուր, մեղր եւլն.):

Կերակուրներ.— Հիւսուածեղէններ (հագուստ), կօշիկ, կաշի. թուղթ:

Բոյսեր.— Ծաղիկներ, խոտեր, պտղատու ծառեր՝ եղանակին համեմատ.— Անտառ, ատաղծ եւլն.:

Գործածական մետաղներ.— Երկաթ, պղինձ, կապար, զինկ:

Մարդկային մարմին.— Գլխաւոր գործարանները եւ անոնց պաշտօնը համառօտակի.— Առողջապահական խրատներ ատոնց մասին:

Երկրագործութեան եւ պարտիզամշակութեան վրայ նախնական գիտելիք՝ դպրոցի պարտէզին մէջ գործնական կերպով:

ՄԻՋԻՆ Ա. (Շարաքական 2 պահ)

Բնակարան.— Գլխաւոր մասերը. շինութեանց նախանիւթեր:

Լուսաւորութիւն եւ լուսաւորութեան միջոցներ:

Մարդկային մարմին.— Գլխաւոր գործարաններ եւ անոնց պաշտօնը, քիչ մը ընդարձակուած: Առողջապահական խրատներ:

Կենդանիներ.— Ողնայարաւորներ, անողնայարա-

ւորներ եւ անոնց ընտանիքները (դասարան քերուած ճիպար կենդանիի մը վրայ ցուցնելով անոնց որոշիչ յատկութիւնները):

Բոյսեր.— Բոյսի մը զանազան գործարանները եւ անոնց պաշտօնը՝ համառօտակի:

Բոյսերու գլխաւոր մեծ բաժանումները:

Շարունակել դպրոցի պարտէզին մէջ երկրագործութեան եւ պարտիզամշակութեան կիրարկութիւնները:

ՄԻՋԻՆ Բ. (Շարաքական 2 պահ)

Մարմիններու երեք վիճակները.— Ծանօթացնել օդը, ջուրը. խօսիլ այրումի վրայ:

Ջրածին եւ թթուածին.— Փայտ, ածուխ.— Ածխային կազ.— Պզտիկ գիտական փորձեր ալ ընել:

Գործածական մետաղներու յատկութիւնները:

Ընդարձակել մարդկային մարմնոյ վրայ Միջին Ա. ին մէջ տրուած տեղեկութիւնները եւ առողջապահական խրատները:

Շարունակել երկրագործութեան եւ պարտիզամշակութեան կիրարկութիւնները:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շարաքական 2 պահ)

Համառօտ եւ մեթոտիկ ընթացք մը բնական գիտութիւններու:

Մարդկային կազմախօսութիւն եւ բնախօսութիւն:

Կենդանաբանութեան նախնական գիտելիքներ:

Բուսաբանութեան նախնական գիտելիքներ:

Երկրաբանական ծանօթութիւններ.— Հանքեր, ժայռեր եւ խաւեր:

Շարունակել երկրագործութեան եւ պարտիզամը-
շակութեան կիրարկութիւնները:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շարաքական 2 պահ)

Բնագիտութիւն.— Նախնական ծանօթութիւններ:

Մթնոլորտ.— Ճնշումը. ծանրաչափ, օդապարիկ-
ջրհաններ. սիֆոն, եւլն:

Ջրակայութիւն.— Ջրաբաշխական մամուլ, Արբի-
միթէսի օրէնք, Արթէզեան հորեր:

Տաքութիւն. շոգի եւ շոգեշարժ մեքենաներ:

Լոյս. ցոլացում. բեկանում: Ոսպնակերպ ապակի-
ներ: Մութ սենեակ, լուսանկար:

Ելքտրականութեան վրայ համառօտ եւ գործնա-
կան ծանօթութիւն:

Համառօտ ծանօթութիւն մետաղներու, մետաղա-
կերպներու եւ գլխաւոր աղերու վրայ:

Շարունակել երկրագործութեան եւ պարտիզամը-
շակութեան կիրարկութիւնները՝ դպրոցի պարտէզին
մէջ:

15. ԱՌՈՂՋԱԳԱՀՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շարաքական 1 պահ)

Առողջ վիճակ եւ հիւանդ վիճակ:

Առողջութեան կարեւորութիւնը անհատական եւ
հաւաքական տեսակէտով:

Առողջապահութիւնը պարտականութիւն մըն է
անձին եւ ընկերութեան հանդէպ:

Հիւանդութեան պատճառները եւ անոնց դասա-
ւորումը:

Մանրէներ.— Օգտակար մանրէներ եւ անոնց
դերը: Ախտածին մանրէներ:

Փոխանցում.— Ճամբաներն ու կերպերը:

Վարակում.— Մարմնոյն հակազդեցութիւնները:
Ապաքինում եւ մահ:

Կանխազգշութիւն.— Մեկուսացում. ապանեխումի
եւ հականեխումի զանազան եղանակներ: Պատուա-
տում:

Տարափոխիկ հիւանդութիւններ եւ քրոնիկ հի-
ւանդութիւններ.— Գլխաւորներուն վրայ համառօտ
ծանօթութիւններ:

Բորբոքում.— Պալարներ, վէրքեր, խախտումներ,
ճմլումներ եւ ոսկորի բեկումներ:

Մորթի առողջապահութիւնը.— Բարազիթներ:

Ձգայարանքներու առողջապահութիւնը:

Դարմանումի կերպեր.— Բնաբուժութիւն, վիրա-
բուժութիւն եւ դեղաբուժութիւն:

Դեղերու բնաստական ներգործութիւնը.— Սովո-
րաբար գործածելի դեղեր:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շարաքական 1 պահ)

Օր եւ շաբաթօրէն — Մթնոլորտի փոփոխութիւն-
ներ: Կլիմայ: Առողջապահիկ գործնական թելադրու-
թիւններ:

ՋՈՒՐ — Ձանազան տեսակ ջուրեր: Խմելու ջուրը:

ԼՈՅՍ — Բնական եւ արուեստական լոյս: Անբաւական
լուսաւորութեան հետեւանքները:

ԱՆՈՒՆԴ — Կենդանական եւ բուսական սնունդներ, համեմներ, շաքար:

Սնունդին չափը եւ որակը: Անբաւական եւ չափազանց սննդառութիւն: Աղիքի բարազիթները:

ԸՄՈՒՆԻՏԵՐ — Համեմային, խմորեալ եւ թորեալ:

Ալքոլը իբրեւ սնունդ եւ իբրեւ թոյն.— Ալքոլականութեան աւերները:

*
* *

Բնականի առողջապահութիւնը:

Հագուստի առողջապահութիւնը:

Դպրոցականի առողջապահութիւնը:

Սեռային առողջապահութիւնը:

16. ԲԱՐՈՅԿՆ. Եւ ԱՌՈՂՋԱԳԿՆ. ԸՆԹԵՐՅՈՒՆՔ

ՏԱՐԲԱԿԱՆ Ա. (Շաքարական 2 պահ)

Ընթերցումներով տղուն սորվեցնել՝ իր ծնողքը, եղբայրները եւ ընկերները սիրել. աղքատներուն օգնել:

Ձանասիրութեան օգուտները եւ ծուլութեան վնասները:

Մեծ մարդոց կենսագրութիւններ՝ պատմութեան ձեւով:

ՏԱՐԲԱԿԱՆ Բ. (Շաքարական 2 պահ)

Դարձեալ ընթերցումներով ծանօթացնել ընտանիքը եւ անոր բարիքները:

Պարտականութիւն. աշխատութիւն. յարատեւութիւն. ձեռներեցութիւն:

Մեծ մարդոց կենսագրութիւններ՝ պատմութեան ձեւով:

ՄԻՋԻՆ Ա. (Շաքարական 2 պահ)

Կրօնական պարտականութիւններ:

Առողջապահութիւն.— Մարմնոյ մաքրութիւն:

Անձին հանդէպ յարգանք: Լաւ հագուիլ եւ միշտ մաքուր ըլլալ: Կենցաղագիտական ծանօթութիւններ:

Հայրենիք, եւ հայրենիքի հանդէպ պարտականութիւններ:

Մեծ մարդոց կենսագրութիւններ:

ՄԻՋԻՆ Բ. (Շաքարական 1 պահ)

Ծանօթացնել մարդկային առաքինութիւնները.— Սակաւապետութիւն. աշխատասիրութիւն. անկեղծութիւն. համեստութիւն. քաջասրտութիւն. ներողամտութիւն. բարութիւն. ողորմածութիւն. արդարասիրութիւն. ձեռներեցութիւն, եւայլն:

Ընդլայնել ընտանիքի եւ հայրենիքի հանդէպ մեր ունեցած պարտականութիւնները:

Կենցաղագիտութիւն, եւ ապրելու արուեստին վրայ օգտակար թելադրութիւններ:

Մեծ մարդոց կեանքէն դրուագներ:

17. ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԲԱԿԱՆ Ա. (Շարքական 1 պահ)

Մատիտով գծել տալ պարզ առարկաներու պատկերները:

Պէտք է հնարաւորութիւն տալ տղոց, իրենց երեւակայած ձեւերն ու պատկերները գծելու:

ՏԱՐԲԱԿԱՆ Բ. (Շարքական 1 պահ)

Դասարան բերուած մարմիններու գծագրութիւնը.
— Նախապէս գծուած պատկերները յիշողութեամբ վերարտադրել:

Երեւակայութեամբ պատկերներ գծելու մղել տղաքը:

ՄԻՋԻՆ Ա. (Շարքական 1 պահ)

Կենդանիներու եւ բոյսերու վրայէն նմանողաբար սեւ կամ գունաւոր մատիտով գծագրել:

Բնութենէն առնուած նիւթեր գծել յիշողութեամբ:

Երկրաչափութեան, թուաբանութեան, իրագիտութեան, աշխարհագրութեան եւ պատմութեան վերաբերեալ նիւթերու գծագրութիւնը:

Երեւակայական նիւթեր գծել. առական, պատմութիւններ եւայլն պատկերազարդել:

Կամաւոր գծագրութիւն՝ դպրոցէն դուրս:

ՄԻՋԻՆ Բ. (Շարքական 1 պահ)

Միջին Ա. ի ծրագիրը շարունակել եւ ընդարձակել:

ԱՍԲԵՐԱԳՈՅՆ Ա. (Շարքական 1 պահ)

Մարդու, կենդանիի, բոյսի եւ գործածական առարկաներու պատկերներ գծել՝ միշտ *modèle* ի մը վերայէն:

Նախապէս գծուած այդ պատկերները վերարտադրել յիշողութեամբ:

Երեւակայութեամբ գծել ուսուցչին տուած նիւթերը (Առական, պատմութիւններ եւ այլ դիպքներ վերցուած):

Դպրոցէն դուրս կամաւոր գծագրութիւններ:

ԱՍԲԵՐԱԳՈՅՆ Բ. (Շարքական 1 պահ)

Ընդլայնելով շարունակել բարձրագոյն Ա. ի ծրագիրը, եւ աւելցնել զարդի յատուկ պատկերներու գծագրութիւնը:

18. ՁԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

ՏԱՐԲԱԿԱՆ Ա.

ՄԱՆՁ ԵՒ ԱՂՋԻԿ ԽԱՌՆ (Շարքական 2 պահ)

Թուղթի աշխատութիւններ:

Թուղթով խառն աշխատութիւններ. — Թուուցիկ, օղապարիկ, ծաղիկներ, լապտերներ եւայլն շինել:

ՄԻԱՅՆ ՄԱՆՁԵՐՈՒ ՇԱՄԱՐ (Շարքական 1 պահ)

Պարտէզին մէջ աւազով, հողով ու քարի կտորներով աշխատութիւններ:

ՄԻԱՅՆ ԱՂՋԿԱՆՑ ՀԱՄԱՐ (Շաբաթական 1 պահ)

Կարի վարժութիւններ:

Քրօշէ:

Թուղթով եւ լաթերով պուպրիկ հագուեցնել:

ՏԱՐԱԿԱՆ Ռ.

ՄԱՆՁ ԵՒ ԱՂՋԻԿ ԽԱՌՆ (Շաբաթական 2 պահ)

Գոյնզգոյն թուղթի կտորներով երիզներ, անկիւններ, պորտեր եւայլն ձեւացնել, ու, գրեր եւ թուանշաններ կազմել:

Թուղթէ ժապաւէններու, ոգորիի, յարդի եւ պըրտուի (raphia) աշխատութիւններ. ոստայնանկութիւն: Խաւաքարտի աշխատութիւններ:

ԿԵԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.— Փրթած կոճակ մը կարել, ծրար մը կապել, գըքին ու տետրակին կողք անցընել, եւայլն:

ՄԻԱՅՆ ՄԱՆՁԵՐՈՒ ՀԱՄԱՐ (Շաբաթական 1 պահ)

Կաւի աշխատութիւններ:

ՄԻԱՅՆ ԱՂՋԿԱՆՑ ՀԱՄԱՐ (Շաբաթական 1 պահ)

Ջանազան տեսակի կարեր ու կարկտան:

Քանրվայի վրայ աշխատութիւններ:

Քրօշէ.— Թրիքօ:

Պուպրիկ հագուեցնել:

ՄԻՋԻՆ Ա.

ՄԱՆՁ ԵՒ ԱՂՋԻԿ ԽԱՌՆ (Շաբաթական 1 պահ)

Թուղթով եւ խաւաքարտով երկրաչափական պատկերներ շինել: Այդ պատկերները մասերու բաժնելով, իրարու վրայ փոխադրելով, եւ կամ, իրարու հետ զուգորդելով՝ փորձառաքար ուսումնասիրել անոնց գլխաւոր յատկութիւնները:

Չուանի աշխատութիւններ:

ԿԵԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.— Հագուստին արատները մաքրել: Դիւր նորոգել, հաստ կաւարիչով տետրակ շինել, եւայլն:

ՄԻԱՅՆ ՄԱՆՁԵՐՈՒ ՀԱՄԱՐ (Շաբաթական 2 յաջորդական պահ)

Փայտի աշխատութիւններ.— Անհրաժեշտ գործիքները:

ՄԻԱՅՆ ԱՂՋԿԱՆՑ ՀԱՄԱՐ (Շաբաթական 2 յաջորդական պահ)

Ջանազան տեսակի կարեր:

Ճերմակեղէնի կարկտութիւն.— Թրիքոյի կարկտութիւն:

Թրիքօ.— Քրօշէ:

Քանրվայի եւ հաստ կտաւի վրայ աշխատութիւններ:

Պութօնիէն եւ օղակ շինելու վարժութիւններ:

Պարզ ճերմակեղէններ ձեւել ու կարել:

ՄԻՋԻՆ Ռ.

ՄԱՆՁ ԵՒ ԱՂՋԻԿ ԽԱՌՆ (Շաբաթական 1 պահ)

Թուղթով եւ խաւաքարտով շինուած երկրաչա-

փական պատկերներու կրկնութիւն.— Այդ պատկերները տարբադադրելով՝ գտնել զանոնք կազմող մասերուն մէջի առնչութիւնները:

Խաւաքարտով երկրաչափական մարմիններ շինել.— Ատոնց մակարդակի մը վրայ տարածումը.— Տռւփեր եւայլն:

Երկաթ թելի աշխատութիւններ.— Երկրաչափական պատկերներ եւ մարմիններ շինել: Ապաժուռի եւ կնոջ գլխարկի կմախքներ պատրաստել, եւայլն:

Մեղրամոմի աշխատութիւններ:

ՄԻԱՅՆ ՄԱՆՁԵՐՈՒ ՀԱՄԱՐ (Շաբաթական 2 յաջորդական պահ)

Փայտի աշխատութեանց ընդլայնումը:

Թիթեղի եւ զինկի աշխատութիւններ.— Անհրաժեշտ գործիքները:

Կօշիկ նորոգել.— Անհրաժեշտ գործիքները:

Բառչուի աշխատութիւններ.— Կրկնակօշիկը, փութպօլը, հեծելանիւի քառչուն նորոգել, եւայլն:

ՄԻԱՅՆ ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ (Շաբաթական 2 յաջորդական պահ)

Նախորդ տարուան ծրագրին ընդլայնումը եւ լրացումը:

Հագուստ, ճերմակեղէն եւ գուլպայ նորոգել:

Պռօտէի պզտիկ վարժութիւններ:

Կարի մեքենային գործածութիւնը:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա.

ՄԻԱՅՆ ՄԱՆՁԵՐՈՒ ՀԱՄԱՐ (Շաբաթական 3 պահ.
Երկուրէ յաջորդական)

Ապակիի աշխատութիւններ.— Ապակի կտրել:

Ներկի աշխատութիւններ.— Իւզաներկ ու ջնարակ պատրաստել եւ գործածել:

Երկաթի պզտիկ աշխատութիւններ.— Կղպանքի նորոգութիւններ:

Խառն նիւթերով ազատ աշխատութիւններ:

Ջանազան նորոգութիւններ:

Գիտական փորձերու համար պարզ գործիքներ շինել.— Արհեստանոցներու եւ գործարաններու այցելութիւններ:

ՄԻԱՅՆ ԱՂՋԿԱՆՑ ՀԱՄԱՐ (Շաբաթ 2 պահ.
Ու յաջորդական)

Ճերմակեղէնի, թրիքոյի եւ հագուստի կարկտուր:

Պռօտէ: — Ճերմակեղէն ձեւել ու կարել:

Պարզ հագուստներ ձեւել ու կարել:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ.

ՄԻԱՅՆ ՄԱՆՁԵՐՈՒ ՀԱՄԱՐ (Շաբաթական 3 պահ.
Երկուրէ յաջորդական)

Խառն նիւթերով ազատ աշխատութիւններ:

Ջանազան նորոգութիւններ:

Գիտական փորձերու համար պարզ գործիքներ:

Ելեքտրական լոյսի, զանգակի եւ թէլէֆօնի հաստատում:—Արհեստանոցներու եւ գործարաններու այցելութիւն:

ՄԻԱՅՆ ԱՂՋԿԱՆՑ ՀԱՄԱՐ (Շաբաթական 2 յաջորդական պահ)

Առտնին ձեւագիտութիւն:

Նորածինին օժիտը:

Պռօտէ:

19. ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շարաքական 1 պահ)

Ընտանիք: Կնոջ դերը՝ իբր տան տիրուհի.— Տանտիկնոջ պարտականութիւնները: Տունը եւ ընտանեկան կեանքը հասեցի ընելու անհրաժեշտութիւնը:

Տնարարութիւն.— Բնակարանի մը զանազան մասերուն հարթարումն ու առողջապահութիւնը: Խնամք կարասիներու եւ անօթիներու: Տնական մթերք: Ճերմակեղէնի, հագուստի եւ կօշիկի խնամք եւ պահպանութիւն:

Շոհում եւ արդկում:

Տանտիկնոջ մը օրը. արդուզարդը.— Տունին պիւտեհէն եւ տոմարակալութիւնը:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շարաքական 1 պահ)

ԽՈՇԱՐԱՐՈՒԹԻՒՆ — Կերակուրները խնամով պատրաստելու կարեւորութիւնը: Զանազան միսերու յատկութիւնները եւ սննդական արժէքը: Հաւկիթ, կաթ եւ կաթնեղէն: Բանջարեղէններ եւ ընդեղէններ: Համեմունք: Անուշեղէններ եւ խմորեղէններ.— Օրուան մը ճաշացուցակը:

ՀԻՆԱՆԴԱՊԱՆՈՒԹԻՒՆ — Հիւանդապահին յատկութիւնները: Հիւանդին սենեակը: Ինչպէ՞ս պէտք է խնամել հիւանդ մը: Տարափոխիկ հիւանդութիւններ. հականեխման անհրաժեշտութիւնը: Հիւանդին սնունդը.— Հիւանդի ճաշացուցակ:

ՄԱՆԿԱՍԱՅՈՒԹԻՒՆ — Նորածին մանկիկներու տրուելիք խնամքները: Լոգանք. անկողին:

Մայրական եւ արուեստական դիեցում: Կաթին ամլացումը: Ինչպէ՞ս դիեցնել մանկիկը: Ծծմօր մասին առողջապահական կանոնները:

Մանկիկին աճումը: Պատուաստում: Մանկիկին ազուայ հանելը, ոտքի ելլելը, կաթէ կտրիլը:

Զանազան շրջաններու համար մանկիկին ճաշացուցակը, հանդերձարանը, սենեակը: Մանկիկին բացօդեայ պտոյտները:

20. ԵՐԳ ԵՒ ՄԱՐԶԱՆՔ

ՑԱՐՐԱԿԱՆ Ա. (Շարաքական 2 պահ)

Ազատ եւ պարզ շարժումներ.— Զափով քայլուածք: Լսողութեամբ սորվեցնել պարզ եւ միաձայն երգեր: Կարգով քայլել՝ երգելով եւ երգին չափին համեմատ:

ՑԱՐՐԱԿԱՆ Բ. (Շարաքական 2 պահ)

Կրկնել Տարր. Ա. ի ծրագիրը քիչ մը ընդլայնուած:

ՄԻՋԻՆ Ա. (Շարաքական 2 պահ)

Հիմնական դիրքեր եւ ձեւերու կրթիչ շարժումներ:

Հաւաքական շարժումներ եւ խաղեր:

Շնչառական մարզանք, վազել:

Լսողութեամբ սորվեցնել երգեր, որոնց չափը եւ կշիռը ըլլան պարզ:

Ծանօթութիւններ տալ տողաշարի, ծայնանիշի, անոնց տեղութեան ձեւերու եւ պարզ չափերու մասին:

ՄԻՋԻՆ Բ. (Շարաքական 2 պահ)

Քիչ մը աւելի ընդարձակելով կրկնել մարզանքի շարժումները:

Հսողութեամբ երգեր սորվեցնել եւ խօսիլ Սօլի բանալիին վրայ. խաղերգութեան պզտիկ վարժութիւններ ընել տալ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. (Շարաքական 2 պահ)

ՄԱՐՁԱՆՔ — Կրթիչ շարժումներ՝ աւելի բարդ ձեւերով: Նմանողաբար շարժումներ ընել տալ: Համաչափ եւ ոչ-համաչափ շարժումներ: Հաւաքական շարժումներ եւ խաղեր: Շնչառական մարզանք: Վազել, լողալ: Զգայարանաց կրթութիւն պտոյտներու ժամանակ: Ընթացիկ կեանքէ առնուած շարժումներ:

ԵՐԱԺՅՏՈՒԹԻՒՆ — Տողաշար, ծայնանիշեր: Տեղողութիւնը. բանալիներ (Սօլ, ֆա):

Չափեր, պարզ եւ բաղադրեալ: Չայնաշար եւ տեսակները: — Շարժում ցուցնող բառեր:

Արտայայտութեան նրբութիւնները ցուցնող բառեր. կրկնութեան նշաններ: Համառօտ խաղերգութիւն (Solfège). — Շարունակել միաձայն եւ երկձայն երգերու խողութեամբ ուսուցումը:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Բ. (Շարաքական 2 պահ)

Կրկնել բարձրագոյն Ա.ի ծրագիրը՝ ընդարձակելով:

ՎԵՐՋ ԾՐԱԳՐԻՆ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԷՆ ՔԱՂՈՒԱԾ

ՔԱՆԻ ՄԸ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Գլուխ 2.

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Յօդ. 34 — Գիշերները տան մէջ պատրաստուելու համար պարտականութիւն պէտք չէ տալ: Տղաք պէտք է որ իրենց ամբողջ գրաւոր պարտականութիւնները կարենան պատրաստել վարժարանին մէջ տեղի ունեցող առօրեայ սերտողութեան միջոցին:

Միայն դադարի օրերու միջոցին տան մէջ պատրաստուելու համար գրաւոր պարտականութիւններ կրնան տրուիլ:

Յօդ. 37 — Աշակերտներու սորվածներուն մասին որոշ գաղափար մը կազմելու նպատակաւ, իւրաքանչիւր ճիւղի համար, 2—3 շաբաթը անգամ մը դասի միջոցին Գրաւոր Հարցումներ կը տրուին:

Այդ գրաւոր հարցումներուն համար 20 վայրկեան յատկացնելը բաւական է:

Դասատուն այդ գրաւոր հարցումներուն տրուած պատասխանները դասէն դուրս կը սրբագրէ եւ յաջորդ դասին կը վերադարձնէ տղոց, իւրաքանչիւրին մէջ տեսած սխալները ուղղելով եւ պէտք եղած դիտողութիւնները ընելով:

Գլուխ Է.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ ԵՐՁԱՆՆԵՐԸ. — ԳՐԱԽՈՐ ՓՈՐՁԵՐ

Յօդ. 40 — Դպրոցական Տարին բաժնուած է 4 շրջանի՝ որոնց իւրաքանչիւրը շուրջ երկուքուկէս ամիս կը տեւէ:

Այդ շրջաններուն սկզբնաւորութեան և վերջաւորութեան թուականները մերձաւորաբար հետեւեալներն են.

Ա. Շրջան. —	1 Սեպտեմբեր	էն	15 Նոյեմբեր:
Բ. Շրջան. —	16 Նոյեմբեր	—	31 Յունուար:
Գ. Շրջան. —	1 Փետրուար	—	15 Ապրիլ:
Դ. Շրջան. —	16 Ապրիլ	—	30 Յունիս:

Յօդ. 41 — Իւրաքանչիւր շրջանի վերջաւորութեանը, այսինքն դպրոցական տարւոյ մէջ 4 անգամ, շրջանաւարտի կարգէն զատ միւս կարգերուն մէջ, ամէն մէկ դասի համար զատ զատ գրաւոր փորձեր կը կատարուին, մերձաւորաբար հետեւեալ թուականներուն.

10 — 15	Նոյեմբեր:	10 — 15	Ապրիլ:
25 — 31	Յունուար:	20 — 30	Յունիս:

Յօդ. 42 — Երգի, Մարզանքի և Ձեռական աշխատութեան համար գրաւոր փորձեր չեն կատարուիր:

Քերանացի դասերուն համար ալ, որոշուած ժամանակամիջոցին մէջ, քերանացի փորձեր կը կատարուին:

Յօդ. 43 — Դրաւոր փորձերը կը կատարուին դասարանին մէջ, դասատուին ներկայութեանը, և վարժարանին պաշտօնական կնիքը կրող թուղթերու վրայ:

Յօդ. 44 — Դրաւոր փորձերու միջոցին, իւրաքանչիւր ճիւղի համար, համապատասխանող շրջանին մէջ դասաւանդուած մասերուն վրայ կարելի հարցումները կը պատրաստուին այդ ճիւղը դասաւանդող ուսուցչին կողմէ: Ատոնց մէջէն տնօրէնը կ'ընտրէ տրուելիք հարցումները:

Յօդ. 45 — Դրաւոր փորձերը, ուսուցչին կողմէ սըրբադրուելէ ու գնահատուելէ և Տնօրէնին կողմէ ալ քննըւելէ ու գնահատուելները վաւերացուելէ վերջ, կը պահուին մասնաւոր տօսիէներուն մէջ:

Յօդ. 46 — Շրջանաւարտ կարգի աշակերտները, շրջաններու գրաւոր փորձերուն տեղ, տարւոյ վերջը, գրաւոր քննութեան կ'ենթարկուին:

Յօդ. 47 — Իւրաքանչիւր շրջանի համար տղոց ամէն մէկ ճիւղէ ստացած գրաւոր փորձերուն նիշերը կ'արձանագրուին Նոթագրութեան տետրին մէջ (Յօդ. 51), համապատասխան շրջանին պատկանող ու այդ ճիւղին յատուկ էջին վրայ:

Գլուխ Բ.

ՎԱՐՔԻ ԵՎ ԴԱՍԻ ՆԻՇ. — ԱՍԵՆ ՄԵԿ ԾԻԻՂԻ ՀԱՄԱՐ

ԵՐԶԱՆԻ ՆԻՇ ԵՎ ԵՐԶԱՆԻ ՄԻՋԻՆ

Յօդ. 48 — Աշակերտի մը վարքը և իւրաքանչիւր ճիւղի մէջ ցոյց տուած յաջողութիւնը կը գնահատուին նիշերով՝ 1 էն միշտ 10:

Յօդ. 50 — Ամէն մէկ դասարանի պատասխանատու ուսուցիչը, իր աշակերտներէն իւրաքանչիւրին համար, պէտք է զատ զատ 4 հատ նիշ տայ ամէն շաբաթ երեկոյները, մին՝ Վարքի, երկրորդը՝ Ուշադրութեան, երրորդը՝ Զանաւորութեան, և չորրորդն ալ՝ Կարգապահութեան համար:

Յօդ. 51 — Ամէն դասարանի մէջ զատ զատ պիտի գտնուի Նօթագրութեան Տետր մը՝ որ ամէն մէկ շրջանի համար և իւրաքանչիւր ճիւղի յատկացուած զատ զատ էջեր պէտք է պարունակէ:

Ամէն անգամ որ աշակերտ մը դասի ելլէ, ուսուցիչը պարտաւոր է նիշ մը դնել Նօթագրութեան տետրին մէջ՝ այդ ճիւղին յատկացուած էջին վրայ:

Դրաւոր պարտականութեանց և գրաւոր հարցումներու (Յօդ. 34—37) նիշերն ալ պէտք է դնել այդ տետրին մէջ:

Այդ տետրի մասնաւոր բաժնին մէջ պէտք է կանոնաւորաբար արձանագրել նաեւ իւրաքանչիւր դասի միջոցին աւանդուած մասերը, կատարուած փորձերը, ինչպէս նաեւ տրուած պարտականութիւնները:

Յօդ. 52 — Ամէն մէկ աշակերտ իւրաքանչիւր ճիւղի համար, պէտք է ստանայ առնուազն երկու շաբաթ մէկ նիշ:

Յօդ. 53 — Ամէն շրջանի վերջ (Յօդ. 40) և այդ շրջանի գրաւոր փորձերէն առաջ (Յօդ. 41), պէտք է զատ զատ գտնուի Միջինները այն նիշերուն՝ զոր իւրաքանչիւր աշակերտ ստացած է ամէն մէկ ճիւղի համար զանազան թուականներու մէջ և որ արձանագրուած են Նօթագրութեան տետրին այդ շրջանին պատկանող ու այդ ճիւղին յատկացուած էջին վրայ:

Այս միջինը կը կոչուի. Աշակերտին, այդ ճիւղին համար, համապատասխանող Շրջանի Նիշը»:

Նօթագրութեան տետրին մէջ այս միջինները գտնուելէ վերջ՝ այդ շրջանին պատկանող էջերը կը գոցուին, և յաջորդ շրջանին համար իւրաքանչիւր ճիւղի յատուկ նոր էջեր կը բացուին:

Յօդ. 54 — Շրջանի մը աւարտելէն ու գրաւոր փորձերը կատարուելէն վերջ՝ իւրաքանչիւր ճիւղի և ամէն մէկ աշակերտի համար զատ զատ պէտք է առնել միջինը այն 2 թիւերուն որ աշակերտ մը ստացած է համապատասխանող շրջանին մէջ և ու է ճիւղի մը համար՝

1. — Իբրեւ Շրջանի Նիշ (Յօդ. 53):

2. — Իբրեւ Գրաւոր Փորձի Նիշ (Յօդ. 41—45):

Այս միջին թիւն ալ կը կոչուի՝ աշակերտի մը համապատասխանող շրջանին համար ու այդ ճիւղին յատուկ Շրջանի Միջին Թիւը:

Գլուխ Ժ.

ԿԱՐԳ ՓՈԽԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Յօդ. 61 — Ընթացաւարտ կարգէն զատ ուրիշ կարգերու մէջ, աշակերտի մը կարգափոխութիւնը կախում ունի՝

1. — Իւրաքանչիւր ճիւղի յատուկ 4 շրջանի միջիններուն միջինէն:

2. — Ամբողջ ճիւղերու ընդհանուր միջինէն:

Յօդ. 62 — Որպէս զի աշակերտ մը կարգը փոխէ, պէտք է որ՝

1. — Իւրաքանչիւր ճիւղի համար՝ 4 շրջանի միջիններուն միջինը առնուազն 3 ըլլայ:

2. — Ամբողջ ճիւղերու ընդհանուր միջինը առնուազն 6 ըլլայ:

Յօդ. 63 — Իր կարգը կը կրկնէ այն աշակերտը՝ որուն ամբողջ ճիւղերուն ընդհանուր միջինը 6 էն պակաս է:

Յօդ. 64 — Ընդհանուր միջինը 6 կամ 6 էն աւելի ըլլալով հանդերձ, եթէ աշակերտի մը.

Ա. — Մինչեւ 3 ճիւղերու մէջ 4 շրջանի միջիններուն միջինը 5 էն պակաս ըլլայ, աշակերտը այդ ճիւղերէն վերաքննութեան կ'ենթարկուի:

Բ. — 3 է աւելի ճիւղերու մէջ 4 շրջանի միջիններուն միջինը 5 էն պակաս ըլլայ, աշակերտը կարգը կը կրկնէ:

Յօդ. 65 — Վարքի, Ուշադրութեան, Ջանասիրութեան և Կարգապահութեան թիւերը կարգափոխութեան վրայ ու է կերպով չեն ազդեր:

Յօդ. 66 — Վերաքննութիւնները կը կատարուին յաջորդ զարօցական տարւոյ սկիզբը:

Յօդ. 67 — Եթէ աշակերտ մը բանաւոր պատճառաւ ու է շրջանի մը գրաւոր փորձերէն մէկուն կամ մէկէ աւելին չկարենայ ներկայ ըլլալ, Տնօրէնին կողմէ որոշուած ուրիշ օր մը կը կատարուին այդ գրաւոր փորձերը:

Իսկ եթէ աշակերտ մը առանց բանաւոր պատճառի ու է շրջանի մը գրաւոր փորձին չէ մասնակցած, բացակայած այդ գրաւոր փորձին համար զէրօ կ'ստանայ իբրեւ նիշ:

Յօդ. 68 — Որպէս զի աշակերտ մը կարենայ կարգը փոխել, պէտք է որ իր բացակայած օրերուն թիւը 66ը անցած չըլլայ:

Եթէ աշակերտ մը մի միայն րանաւոր պատճառներով 66 օրէ աւելի բացակայած ըլլայ, Կրնայ բացառիկ կարգադրութեան մը արժանանալ՝ երբ իր բարի վարքով ու ջանասիրութեամբը կրցած է ուսուցչական խումբին և Տնօրէնութեան համակրութիւնը շահիլ:

Գլուխ ԺԱ.

ԸՆԹԱՑԱԿԱՐՏ ԿԱՐԳԻՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յօդ. 69 — Միայն ընթացաւարտ կարգը քննութեան ենթակայ է: Այդ քննութիւնները կը կատարուին գրաւոր: Ընթացաւարտ կարգին քննութեանց ժամանակացոյցը վարժարանի Տնօրէնին կողմէ կը պատրաստուի, և, առ ի տեղեկութիւն, Կրթական Տնօրէնութեան կը մատուցուի:

Յօդ. 70 — Աշակերտները երգի և Մարզանքի ճիւղերէն քննութեան ենթակայ չեն: Թէ՛ այս երկու ճիւղերուն և թէ՛ երկրագործութեան և Պարտիզամշակութեան կիրարկութիւններուն համար աշակերտաց նիշերը կ'որոշուին՝ ըստ տարւոյ ընթացքին, իրենց ցոյց տուած ջանասիրութեան և ընդունակութեան:

Գծագրութեան, Ձեռական Աշխատութեան, Կար ու Ձեռի և Ձեռագործի ճիւղերուն համար ալ քննութիւն չի կատարուիր. ատոնց նիշերն ալ կ'որոշուին տղոց ամբողջ տարուան ընթացքին ըրած աշխատութիւնները ցուցադրելով:

Աղջկանց Առտնին Տնտեսութեան համար քննութիւն կը կատարուի:

Յօդ. 71 — Լեզուի դասերուն քննութիւնները թէ՛ գրաւոր և թէ՛ բերանացի կը կատարուին, և այդ երկու նիշերուն միջինը կ'առնուի:

Յօդ. 72 — Ընթացաւարտի գրաւոր քննութեանց հարցումները կը պատրաստուին մասնաւոր յանձնաժողովի մը կողմէ՝ ըստ Կրթական Ծրագրին:

Յօդ. 73 — Քննութիւնները դասարանին մէջ և ուսուցիչներուն ներկայութեան տեղի կ'ունենան:

Ուսուցիչներէն զատ, քննութեան ներկայ կը գտնուին նաեւ, Տնօրէնութեան կողմէ հրաւիրուած անձնաւորութիւններ և Կրթական Տնօրէնութեան կողմէ շնորհաւոր քննիչները:

Յօդ. 74 — Գրաւոր քննութիւնները կը կատարուին վարժարանին պաշտօնական կնիքը կրող թուղթերու վրայ:

Քննութիւն մը աւարտելէն վերջ, թուղթերը կ'ենթարկուին գնահատութեանը մասնաւոր յանձնաժողովի մը՝ որ իւրաքանչիւր աշակերտին նիշը կ'որոշէ խորհրդակցութեամբ: Գնահատումի միջոցին նկատի կ'առնուին նաեւ աշակերտին տարւոյ մէջ այդ ճիւղէն ստացած նիշերը:

Յօդ. 75 — Քննութիւնները առ առաւելն 10 օր կը տեւեն:

Քննութեանց ժամանակամիջոցը կը ճատելու համար, նոյն օրուան մէջ և իրարու յաջորդաբար, զանազան ճիւղերէ քննութիւն կատարել կարելի է. միայն թէ ամէն մէկ ճիւղի համար զատ նիշ մը տալ անհրաժեշտ է:

Յօդ. 76 — Վարքի, Ուշադրութեան, Ջանասիրութեան և Կարգապահութեան թիւերը քննութեանց թիւերուն վրայ չեն ազդեր:

Յօդ. 77 — Քննութեանց համար պէտք չէ կոտորակաւոր թիւ տալ: Միջին առնուած միջոցին կէսէ պակաս կոտորակը կը ջնջուի, իսկ կէս և կէսէ աւելի կոտորակն ալ ամբողջի կը լրացուի:

Միմիայն աշակերտներու դասաւորումը կարենալ ընելու համար՝ միջին թիւերը եղածին պէս պէտք է պահել, առանց կոտորակ մը ջնջելու և կամ ամբողջի լրացնելու:

Յօդ. 78 — Որպէս զի աշակերտ մը վկայական առնէ, պէտք է որ բոլոր ճիւղերուն համար տուած նիշերուն ընդհանուր միջինը առ նուազն 6 ելլէ, և, ոչ մէկ ճիւղէ 4 է պակաս նիշ մը ստացած ըլլայ:

Յօդ. 79 — Բոլոր ճիւղերուն ընդհանուր միջինը 6 կամ 6 է աւելի ըլլալով հանդերձ, եթէ աշակերտ մը.

Ա.— Մինչեւ 3 ճիւղերու համար 4 էն պակաս նիշ մը ստացած ըլլայ, աշակերտը այդ ճիւղերէն վերաքննելի կը նկատուի:

Բ.— 3 է աւելի ճիւղերու համար 4էն պակաս նիշ մը առած ըլլայ, վկայական ստանալու իրաւունքը կը կորսնցնէ:

Յօդ. 80— Ընթացաւարտ կարգին վերաքննութիւնները կը կատարուին վարժարանի Տնօրէնին և քննիչ յանձնաժողովին կողմէ որոշուած թուականի մը:

Վերաքննութիւնները պէտք է քննութեանց չըջանէն առ առաւելն 13 օր վերջը կատարուին:

Վերաքննութեանց թուականներն ալ պէտք է հաղորդել Գրեթական Տնօրէնութեան, առ ի տեղեկութիւն:

Յօդ. 81 — Հիւանդութեան կամ ուրիշ ուէ բանաւոր պատճառաւ մը, մէկ կամ աւելի քննութեանց չմասնակցող աշակերտի մը քննութիւնը կը կատարուի վերաքննութեանց միջոցին:

Առանց բանաւոր պատճառի քննութեան մը չմասնակցող աշակերտը, այդ քննութեանէն ղէրօ ստացած կը նկատուի:

*
* *

Գիտողութիւն.— Կրթական Տնօրէնութեան մատուցուած այս ներքին Կանոնագիրը կազմուած է հետեւողութեամբ « Իյթ Թիւրխաթ Թալիսնարնամէի », պղտիկ փոփոխութիւններով որպէս զի կարելի ըլլայ զայն պատշաճեցնել մեր Ազգ. վարժարանաց:

Հոս տրուած է մանաւանդ, « Թալիսնարնամէ » ին փոխուած յօդուածները:

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ

ԿՐՕՆԱԿԱՆ ՏՕՆԵՐՈՒ

ՈՐՈՆՑ ՄԻՋՈՑԻՆ ԿԸ ՓԱԿՈՒԻՆ ԱԶԳ. ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐԸ

- 1 — ԿԱՂԱՆԴԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ. — 30 Դեկտեմբերի երեկոյէն մինչև 8 Յունուարի առաւօտը, 8 օր:
- 2 — ՈՒԹՕՐԷՔ. — 13 Յունուար:
- 3 — ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ. — 14 Փետրուար:
- 4 — ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ. — Վարդանանցի առաւօտէն մինչև յաջորդ երկուշաբթի առաւօտը, 4 օր:
- 5 — ԱԻԵՏՈՒՄ. — 7 Ապրիլ:
- 6 — ՋԱՏԿԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ. — Աւագ երեքշաբթիի երեկոյէն մինչև Ջատկի չորրորդ օրուան առաւօտը, 7 օր:
- 7 — ՀԱՄԲԱՐՁՈՒՄ:
- 8 — ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. — Մեռելոցի երկուշաբթին:
- 9 — ԽԱՉՎԵՐԱՅ. — Մեռելոցի երկուշաբթի օրը:

Գիտողութիւն.— Պատկ. Կրօնական Ժողովոյ որոշած այս եկեղեցական տօներէն զատ, վարժարանները կը փակուին նաև Ազգ. պաշտօնական տօնի օրերը՝ ըստ օրինական տրամադրութեանց:

ԱՍՏՆԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՇԱՐԱԹԱԿԱՆ ԴԱՍԱՑՈՑՅԻ ՆՄՈՅՇ»

Մ Ա Ս Ի Ն

1 — Յորեկէն վերջի երրորդ պահը միշտ սերտողութիւն է:

2 — Յորեկէն վերջի 2 պահերէն գոնէ մին անպայման մտաւոր ճիգ չպահանջող ճիւղի մը յատկացուած է:

3 — Ճիւղի մը յատկացուած պահերը այնպէս մը կարգադրուած են որ յաջորդական դասերը իրարմէ բաժնուած ըլլան գրեթէ հաւասար օրերով: Այսպէս.

Ա. — Շաբաթական 5 պահով եղած ճիւղերը դրուած են ամէն օր մէկական պահ:

Բ. — Շաբաթական 4 պահով եղած ճիւղերը դրուած են, Երկուշաբթի, Երեքշաբթի, Հինգշաբթի ու Շաբաթ օրերը, և կամ, Երկուշաբթի, Զորեքշաբթի, Հինգշաբթի ու Շաբաթ օրերը:

Գ. — Շաբաթական 3 պահով եղած ճիւղերը տրուած են, Երկուշաբթի, Զորեքշաբթի ու Շաբաթ օրերը, կամ, Երկուշաբթի, Հինգշաբթի ու Շաբաթ օրերը, և կամ, Երեքշաբթի, Հինգշաբթի ու Շաբաթ օրերը:

Դ. — Շաբաթական 2 պահով եղած դասերը դրուած են, Երկուշաբթի ու Հինգշաբթի օրերը, կամ, Երեքշաբթի ու Շաբաթ օրերը, և կամ, Զորեքշաբթի ու Շաբաթ օրերը:

4 — Զեռական Աշխատութիւնները այնպէս մը կարգադրուած են որ, եթէ վարժարանը արդիւն մը ունի, ամբողջ դասարաններն ալ կարենան ատկէջ օգտուել առանց զիրար խաչաձեւելու:

Նոյն բանը նկատի առնուած է նաեւ Մարզանքի և Երգի համար:

5 — Բացատրեալ Ընթերցանութեան և Բարոյական ու Առողջապահական Ընթերցութեան դասերը հասկէս Մայրենի Լեզուի դասեր ըլլալով, ըստ այնմ նկատի առնուած են:

6 — Ներքին Կանոնագրի 23 երրորդ Յօդուածը կը տըրամադրէ որ.

«Վարժարանին մնայուն ուսուցիչներէն մէկը, երբ ո եւ չ ճիւղի մը մէջ մասնաւոր կարողութիւն մ'ունենայ, կրնայ, Տնօրէնին կարգադրութեամբ իր դասարանին քանի մը ճիւղերը ձգելով, անոնց ձեռք դասաւանդել իր նախասիրած ճիւղը միւս դասարաններուն մէջն ալ: Այս պարագային, եւ միշտ Տնօրէնին արժեւորութեամբ, միւս դասարաններու մնայունները կ'ստանան իր դասարանին քացը մնացած ճիւղերը »:

Յօդուածին այս տրամադրութիւնը կարելի դարձնելու համար կազմուած են հետեւեալ խմբաւորումները.

Ա. Խմբաւորում — Երգի և Մարզանքի համար — Տարր. Բ., Միջին Ա. ու Բ., և Բարձրագոյն Ա. ու Բ.ի մէջ, ընդամէնը 10 պահ:

Բ. Խմբաւորում — Զեռական Աշխատութեան համար. — Տարր. Ա. ու Բ., և Միջին Ա.ի մէջ, ընդամէնը 9 պահ:

Գ. Խմբաւորում — Զեռական Աշխատութեան համար. — Միջին Բ., և Բարձրագոյն Ա. ու Բ.ի մէջ, ընդամէնը 9 պահ:

Դ. Խմբաւորում — Կար ու Զեռի և Զեռագործի համար. — Տարր. Բ., Միջին Ա. ու Բ., և Բարձրագոյն Ա. ու Բ.ի մէջ, ընդամէնը 9 պահ:

Ե. Խմբաւորում — Գծագրութեան համար. — Ամբողջ դասարաններուն մէջ, ընդամէնը 6 պահ:

Բ. Խմբաւորում — Ուսողութեան և Տոմարակալութեան համար. — Միջին Ա. ու Բ., և Բարձրագոյն Ա. ու Բ.ի մէջ, ընդամէնը 17 պահ:

Գ. Խմբաւորում — Ուսողութեան համար. — Տարր. Ա. ու Բ.ի մէջ, ընդամէնը 10 պահ:

Դ. Խմբաւորում — Ֆրանսերէնի համար — Ամբողջ դասարաններուն մէջ, ընդամէնը 11 պահ:

Ե. Խմբաւորում — Հայերէնի, Բացատրեալ Ընթերցանութեան, Բարոյական ու Առողջապահական Ընթերցութեան և Գրարարի համար. — Միջին Ա. ու Բ., և Բարձրագոյն Ա. ու Բ.ի մէջ, ընդամէնը 24 ժամ:

Զ. Խմբաւորում — Բնական Գիտութիւններու համար. — Ամբողջ դասարաններուն մէջ, ընդամէնը 14 պահ:

Մ. Խմբավորում — Թրքերէնի համար. — Տարր. Ա. ու Բ.,
և Միջին Ա. ու Բ.ի մէջ, ընդամենը 16 պահ:

Ն. Խմբավորում — Թրքերէնի, Թուրք Պատմութեան և
Աշխարհագրութեան համար. — Բարձրագոյն Ա. ու Բ.ի մէջ,
ընդամենը 12 պահ:

Ք. Խմբավորում — Ընդհանուր Պատմութեան համար. —
Ամբողջ դասարաններուն մէջ, ընդամենը 7 պահ:

Չ. Խմբավորում — Ընդհանուր Աշխարհագրութեան հա-
մար. — Ամբողջ դասարաններուն մէջ, ընդամենը 5 պահ:

Ր. Խմբավորում — Կրօնքի համար. — Ամբողջ դասարան-
ներուն մէջ, ընդամենը 6 պահ:

Պատրաստեալ յիշատակական խորհրդոյ եւ մա-
տուցեալ 'ի վաւերացումն Ազգային Կեդրոնական Վարչ-
ութեան Խառն Ժողովոյ:

Ուսումնական Խորհրդոյ

Ասեւնապետ Ասեւնապետ

Արս Ն. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ ՊԵՏԻՍ Պ. ԱՏՐՈՒՆԻ

28 Մայիս 1924, Կ. Պոլիս



Ծրագիրս քննեալ եւ հաստատեալ գտլով 'ի Խառն
Ժողովոյ Ազգային Կեդրոնական Վարչութեան 'ի ձժԱ.
Նստի իւրում, յ'3 Յունիս 1924 ամի, հրամայեմք ի
գործադրութիւն:

Պատրիարքական Տեղապահ

ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

22 Յունիս 1924

Պատրիարքական Հայոց

Կ. Պոլիս



ՀԱՐԱԹԱԿԱՆ ԴԱՍՏՈՅՑԻ ՆՄՈՅՉ

ՕՐԵՐ ու ԺԱՄԵՐ	Տ Ա Ր Ր Ա Կ Ա Ն				Մ Ի Զ Ի Ն				Բ Ա Ր Զ Ր Ա Գ Ո Յ Ն										
	Առաջին		Երկրորդ		Առաջին		Երկրորդ		Առաջին		Երկրորդ								
ԿՓՅՈՒԹՅՈՒՆ	1	Ուսողութիւն	—	G	Հայերէն	Թրքերէն	—	M	Հայերէն	—	K	Բնական Գիտութիւն	—	L	Ուսողութիւն	—	F		
	2	Աշխարհագրութիւն	—	Q	Բնական Գիտութիւն	—	L	Ուսողութիւն	—	F	Թրքերէն	—	M	Հայերէն	—	H			
	3	Թրքերէն	—	M	Ուսողութիւն	—	G	Բնական Գիտութիւն	—	L	Ուսողութիւն	—	F	Յիշատակութիւն	—	K			
	4	Հայերէն			Թրքերէն	—	M	Հայերէն	—	K	Պատմութիւն	—	P	Ուսողութիւն	—	F	Բնական Գիտութիւն	—	L
	5	Զեռկն. Աշխատութ. [*]	—	B	Բարոյական Ընթերցութեամբ			Յիշատակութիւն	—	H	Բարոյական Ընթ.	—	K	Երգ և Մարզանք	—	A	Զեռկն. Աշխատութ. —	[*]	C
	6	Երգ և Մարզանք			Զեռկն. Աշխատութիւն	—	B	Գծազրութիւն	—	E	Երգ և Մարզանք	—	A	Առողջապահութիւն			Զեռկն. »	—	[*]
ԿՓՅՈՒԹՅՈՒՆ	1	Ուսողութիւն	—	G	Հայերէն	Թրքերէն	—	M	Բացատրեալ Ընթ.	—	K	Ուսողութիւն	—	F	Թուրք Պատմութիւն	—	N		
	2	Հայերէն			Աշխարհագրութիւն	—	Q	Հայերէն	—	K	Թրքերէն	—	M	Թուրք Աշխարհագրութ. —	N	Վաճառական. Գիտելիք	—	F	
	3	Թրքերէն	—	M	Բացատրեալ Ընթերցանութիւն			Աշխարհագրութիւն	—	Q	Բնական Գիտութիւն	—	L	Պատմութիւն	—	P	Թրքերէն	—	N
	4	Բացատրեալ Ընթերցանութիւն			Ուսողութիւն	—	G	Բացատրեալ Ընթ.	—	K	Աշխարհագրութիւն	—	Q	Թրքերէն	—	N	Պատմութիւն	—	P
	5	Կրօնք	—	R	Երգ և Մարզանք	—	A	Բարոյական Ընթ.	—	K	Գծազրութիւն	—	E	Զեռկն. Աշխատութ. [*]	—	C	Քաղաքացիական Կրթութիւն		
	6	Գծազրութիւն	—	E	Կրօնք	—	R	Զեռկն. Աշխատութիւն	—	B	Յիշատակութիւն	—	H	Զեռկն. »	[1]	C	Երգ և Մարզանք	—	A
ԿՓՅՈՒԹՅՈՒՆ	1	Ուսողութիւն	—	G	Բացատրեալ Ընթերցանութիւն			Պատմութիւն	—	P	Ուսողութիւն	—	F	Հայերէն	—	K	Յիշատակութիւն	—	H
	2	Բացատրեալ Ընթերցանութիւն			Ուսողութիւն	—	G	Ուսողութիւն	—	F	Պատմութիւն	—	P	Բնական Գիտութիւն	—	L	Հայերէն	—	K
	3	Բնական Գիտութիւն	—	L	Թրքերէն	—	M	Յիշատակութիւն	—	H	Հայերէն	—	K	Թրքերէն	—	N	Ուսողութիւն	—	F
	4	Աշխարհագրութիւն	—	Q	Պատմութիւն	—	P	Հայերէն	—	K	Թրքերէն	—	M	Յիշատակութիւն	—	H	Թրքերէն	—	N
	5	Զեռկն. Աշխատութիւն	—	B	Բարոյական Ընթերցութեամբ			Բարոյական Ընթ.	—	K	Զեռկն. Աշխատութ. —	[*]	C	Երգ և Մարզանք	—	A	Կրօնք	—	R
	6	Բարոյական Ընթերցութեամբ			Զեռկն. Աշխատութիւն	—	B	Երգ և Մարզանք	—	A	Զեռկն. »	—	[*]	C	Կրօնք	—	R	Գծազրութիւն	—
ԿՓՅՈՒԹՅՈՒՆ	1	Հայերէն			Բնական Գիտութիւն	—	L	Ուսողութիւն	—	F	Յիշատակութիւն	—	H	Բացատրեալ Ընթ.	—	K	Թրքերէն	—	N
	2	Ուսողութիւն	—	G	Թրքերէն	—	M	Հայերէն	—	K	Ուսողութիւն	—	F	Թրքերէն	—	N	Բնական Գիտութիւն	—	L
	3	Բնական Գիտութիւն	—	L	Հայերէն			Թրքերէն	—	M	Բացատրեալ Ընթ.	—	K	Ուսողութիւն	—	F	Թուրք Աշխարհագրութ. —	N	
	4	Թրքերէն	—	M	Ուսողութիւն	—	G	Բնական Գիտութիւն	—	L	Հայերէն	—	K	Թուրք Պատմութիւն	—	N	Վաճառական. Գիտելիք	—	F
	5	Երգ և Մարզանք			Երգ և Մարզանք	—	A	Զեռկն. Աշխատութ. [*]	—	B	Կրօնք	—	R	Գծազրութիւն	—	E	Զեռկն. Աշխատութ. —	[1]	C
	6	Բացատրեալ Ընթերցանութիւն			Գծազրութիւն	—	E	Զեռկն. »	[*]	B	Երգ և Մարզանք	—	A	Քաղաքացիական Կրթութիւն			Հայերէն Դրաբար	—	K
ԿՓՅՈՒԹՅՈՒՆ	1	Բնական Գիտութիւն	—	L	Հայերէն	Ուսողութիւն	—	F	Թրքերէն	—	M	Հայերէն	—	K	Յիշատակութիւն	—	H		
	2	Հայերէն			Ուսողութիւն	—	G	Թրքերէն	—	M	Ուսողութիւն	—	F	Թրքերէն	—	N	Հայերէն	—	K
	3	Թրքերէն	—	M	Բնական Գիտութիւն	—	L	Պատմութիւն	—	P	Հայերէն	—	K	Ուսողութիւն	—	F	Թրքերէն	—	N
	4	Ուսողութիւն	—	G	Թրքերէն	—	M	Բացատրեալ Ընթ.	—	K	Բնական Գիտութիւն	—	L	Յիշատակութիւն	—	H	Ուսողութիւն	—	F
	5	Բարոյական Ընթերցութեամբ			Զեռկն. Աշխատութ. [*]	—	B	Կրօնք	—	R	Զեռկն. Աշխատութիւն	—	C	Հայերէն Դրաբար	—	K	Երգ և Մարզանք	—	A
	6	Զեռկն. Աշխատութիւն	—	B	Բացատրեալ Ընթերցանութիւն			Երգ և Մարզանք	—	A	Յիշատակութիւն	—	H	Զեռկն. Աշխատութ. —	[*]	C	Առողջապահութիւն		

[*] Աղբիւրները Կար ու Զեռկն կ'ըզային:

[1] Աղբիւրները Առեւտրային Տնտեսական կը պատասխան:

<< Ազգային գրադարան



NL0239142

53. 709

